
**ԻՐԱԿԱՆՆ ՈՒ ՄՏԱՑԱԾԻՆԸ
ՈՒՄԲԵՐՏՈ ԷԿՈՅԻ «ԲԱՈՒԴՈՒԽՆՈ» ՎԵՊՈՒՄ**

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ. Ա.

Զանգվածային լրատվության միջոցների ու համացանցի ավելի ու ավելի մեծացող ազդեցության հետևանքով XX դարավերջի և XXI դարասկզբի արևմտյան քաղաքակրթության կարևորագույն հիմնախնդիրներից են դառնում տեղեկատվության ահռելի քանակն ու անվերահսկելիությունը: Այս պայմաններում շարքային մարդուն դժվար է ընտրություն կատարել եղած տեղեկատվության մեջ, և հաճախ պարզապես ստիպված է վստահել որևէ աղբյուրի: Տեղեկատվության «ստեղծումը», այն հանրությանը հրամցնելը կարևորագույն նշանակություն են ունեցել բոլոր ժամանակներում, երբ տարբեր նպատակների հասնելու համար օգտագործվել, կոծկվել, ավելացվել կամ «շտկվել» են այս կամ այն տեղեկությունները:

Ումբերտո Էկոն՝ հետմոդեռնիզմի մեր օրերի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, բազմիցս անդրադարձել է այս խնդրին տարբեր աշխատություններում, ինչպես նաև իր վեպերում՝ հաճախ դիմելով միջնադարին: Մենք, մասնավորապես, կանդորատոնանք հեղինակի «Բաուդոլինո» վեպին՝ շոշափելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են պատմական փաստը, դրա հավաստիությունը և սուբյեկտիվությունը, հորինվածքը:

«Բաուդոլինո» վեպի գործողությունները ծավալվում են XII-XIII դարերում: Այստեղ նկարագրվում են այս ժամանակաշրջանի Եվրոպայի կարևորագույն պատմական իրադարձությունները, ինչպես, օրինակ, չորրորդ խաչակրաց արշավանքը և Կոստանդնուպոլսի թալանը, Ֆրիդրիխ Շիկսմորուսի մահը: Վեպում այս իրադարձություններին, սակայն, միախառնվում են ոչ պակաս հայտնի միջնադարյան առասպելները, օրինակ՝ Սուրբ Գրաալի, Երեց Հովհաննի թագավորության և Ֆրիդրիխին վերջինիս նամակի մասին: Այս ամենի անմիջական մասնակիցն է դառնում վեպի գլխավոր հերոսը՝ գյուղացի Բաուդոլինոն, որը, ըստ վեպի պլոթեի, պատահաբար ընկնում է Ֆրիդրիխ Շիկսմորուսի արքունիք ու դառնում նրա ամենահավատարիմ մարդկանցից մեկը: Բաուդոլինոն ներկայանում է ընթերցողին որպես փիլիսոփա, քաղաքական գործիչ, հասարակ գյուղացի կամ էլ պարզապես արկածախնդիր ստախոս: Նա է թե՛ պլոթետային բազմաթիվ գծերի, թե՛ կերպարների կապող օղակը, թե՛ եվրոպական պատմության արարողը, թե՛ միջնադարյան լեգենդների կերտողը: Բաուդոլինոն մտացածինը դարձնում է իրական:

Գրքի շնորհանդեսի նախօրեին տված հարցազրույցում հեղինակն այսպես է բնութագրում իր հերոսին. «Իմ Բաուդոլինոն առասպելաստեղծ մեքենա է»¹: Ինչպես

¹ Эко У. Баудолино, С.-П., 2005, с. 567.

նկատում է գրականագետ Գրազիա Կազազրանդեն՝ Ու. Էկոյի նպատակն էր իր հերոսին պատկերել որպես պատմող, որպես մեկը, որ ստեղծում է պատմություններ ու պատմում դրանք²: Հեղինակը նշում է. «Բաուդոլինոյի պատմությունները սկսվում են որպես նրա հորինվածքներ, սակայն հետագայում դառնում են ճշմարտություն: Սրանով ես ցանկանում էի նշել պատմողի մեծագույն գործառնությունը, որն է՝ նա պատմում է մի բան, որը պատմելուց առաջ գոյություն չի ունեցել»³: Այս մեկնաբանությունը կիրառելի է բոլոր պատմողների նկատմամբ՝ թե՛ գրողների, թե՛ պատմիչների, որոնց հեղինակը համեմատում է ժամանակակից լրագրողների հետ:

«Բաուդոլինոն» պատմավեպ է, սակայն նաև հետմոդեռնիստական վեպ, որտեղ հեղինակը տալիս է պատմական իրադարձությունների իր հեզնական մեկնաբանությունը: Օրինակ՝ վեպում շատ է խոսվում մասունքների մասին, որոնք մեծ պահանջարկ ունեին միջնադարում. չէ՞ որ հենց դրանց առկայությունն էր ապահովելու այս կամ այն եկեղեցու հեղինակությունն ու այնտեղ գնացող ուխտավորների հոսքը, որը հանգեցնում էր նաև տնտեսական աշխուժության ու տեղանքի հարստացման: Որոշ իմաստով մասունքները միջնադարում դարձել էին ուխտավորներ գրավելու յուրատեսակ գովազդ: Բնականաբար, կային նաև այդ մասունքների առաջարկն ապահովողները: Սրանց մեջ էին Բաուդոլինոն և նրա ընկերները: Էկոն Բաուդոլինոյին է վերագրում Մոգերի գրեթե անվնաս մարմինների (իրականում փայտե տիկնիկների) հայտնաբերումը և դրանց տեղափոխումը Քյոլն, ինչպես նաև տապանը կառուցելու ժամանակ Նոյի կացնի (իրականում ոչ պիտանի գործիքի) գտնելը:

«Բաուդոլինոն» վեպում հանդիպում ենք հայազգի մի հերոսի՝ Մխիթար Արծրունուն, որը մասնագիտացել էր Հովհաննես Մկրտչի գանգերի «պատրաստման» գործում: «Բաուդոլինոն բազմապատկում է Բյուզանդիայի գանձերը» գլխում տեսնում ենք, թե ինչպես են սովորական, իսկ երբեմն էլ անպետք իրերը վերածվում սրբությունների, և թե ինչպես են XIII դարում Բաուդոլինոյի և նրա ընկերների՝ շրջանառության մեջ դրած մասունքները գտնում իրենց երկրրպագողներին: Այսպես, մի շարք սովորական իրեր դառնում են մասունք, որոնց շուրջ հյուսվում են նաև լեգենդներ ու ավանդություններ, որոնք դառնում են պատմության մաս և գեղեցիկ ոսկյա սրվակներով մատուցվում մարդկանց:

Հեղինակը պատմում է Ֆրիդրիխ Շիկամորուսին ուղղած մի նամակի մասին, որը վեպում հորինում է Բաուդոլինոն իր ընկերների հետ, սակայն նամակի հեղինակության մասին տված Ֆրիդրիխի հարցին նա պատասխանում է. «Ես այն վերաշարադրել եմ լավ լատիներենով՝ միացնելով իմաստունների իմացածն ու ասածները, որոնք գոյություն ունեին միայն անջատ վիճակում, և որոնց ոչ ոք ականջ չէր դնում: Սակայն այն, ինչ ասվում է նամակում, ճշմարիտ է, ինչպես Ավետարանը: Թե կուզես՝ իմ ձեռքով

² <http://www.bordersstores.com/features/feature.jsp?file=eco>

³ Նույն տեղում:

ավելացրել եմ միայն այն, որ նամակն ուղղված է անձամբ քեզ»⁴: Ինչպես տեսնում ենք, հերոսը ոչ միայն խոստովանում է իր արարքը, այլև համեմատում է իր ստեղծած նամակն ու դրա ճշմարտացիությունը Ավետարանի հետ՝ ակնարկելով, որ այն նույնպես տարբեր ժամանակների պատմությունների հավաքածու է, որը գրել ու խմբագրել են իր նման մարդիկ:

Ու. Էկոն հիշատակում է նաև թագավորի և Քրիստոսից ստացված նրա ընծայի մասին ավանդությունը: Ի թիվս այլ պատմիչների (Եվսեբիոս Կեսարացի՝ IV դ., Եվագրիոս Եդեսիացի՝ VII դ.)՝ Մովսես Խորենացին ևս իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ ներկայացնում է Արգար թագավորի պատմությունը՝ նշելով, որ Եդեսիայի հիմնադիր հայոց թագավորին իմաստության համար կոչում էին «ավագ այր», իսկ հույներն ու ասորիները, որոնք չէին կարող ճիշտ արտասանել նրա անունը, նրան կոչեցին Արգարոս⁵: Այստեղ մեկ անգամ ևս ներկա ենք իրականի ու մտացածինի միախառնումի, այս անգամ հայոց պատմության մեջ, քանի որ Արգար թագավորի հայ լինելու ու նրա անվան նման մեկնաբանության մասին խոսում է միայն Մովսես Խորենացին, ու դրա հավաստիությունը խիստ կասկածելի է, սակայն սա չի խանգարել բազմաթիվ հայերի պարծանքով մտածել, որ հայազգի թագավորը նամակագրության մեջ էր Քրիստոսի հետ: Ավելին, վերջին տարիներին Հայաստանում լույս տեսած հարյուրհազարանոց թղթադրամի վրա, որպես հայկական պետականության խորհրդանիշ, պատկերված է հենց Արգար թագավորը՝ ենթադրյալ նամակը ձեռքին, որի գոյությունն ու Հայաստանի հետ կապը վկայում է միայն Խորենացին: Ու. Էկոն, սակայն, օգտվել է այլ աղբյուրներից, ամենայն հավանականությամբ՝ Եվսեբիոսից, քանի որ վեպում խոսվում է Եդեսիայի Արգար V թագավորի և Արժաթեյան քիթոնի, այսինքն՝ Փրկչի անձեռակերտ պատկերի մասին:

Բաուդոլինոյի և գերմանացի պատմիչ Օտոն Ֆրեյզինգացու՝ հումորով հագեցած երկխոսությունների միջոցով Ու. Էկոն ընթերցողին հասցնում է պատմության հարաբերականության, դրա սուբյեկտիվության, նույնիսկ շինծու լինելու գաղափարը: Դրան անդրադառնում է նաև անգլիացի գրող Ջ. Բարնսը. «Պատմությունը իրականում պատահածը չէ, այլ այն, ինչ ասում է պատմիչն այդ մասին»⁶: Այսպես, վեպի վերջում հերոսներից մեկը՝ Բաուդոլինոյի փրկած պատմիչ Նիկիտիս Խոնիատիսի ընկեր Պաֆնուցիուսը, խորհուրդ է տալիս նրան չներառել Բաուդոլինոյի պատմությունը իր տարեգրության մեջ, քանի որ այն պատմում է ոչ թե մեծ տերությունների, այլ հեռավոր ու աննշան վայրերի մասին:

⁴ Eco U. Baudolino, Bompiani, il Nuovo Istituto Italiano d'Arti Grafiche, Bergamo, 2005, p. 210.

⁵ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 175-177:

⁶ Стéу Киреева Н. В. Постмодернизм в зарубежной литературе. Учебный комплекс для студентов-филологов, М., 2004, с. 56.

– Շատ գեղեցիկ պատմություն էր (Բաուդոլինոյի պատմություն- նը – Ե. Հ.), ափսոս, որ ոչ ոք այն չի իմանա, այն անհայտ կմնա:

– Մի՛ կարծիր, թե աշխարհի միակ պատմություններ պատմողն ես: Վաղ թե ուշ, կգա մեկը, ով Բաուդոլինոյից էլ ավելի ստախոս է ու կպատմի այն⁷:

Այսպիսով Նիկիտիս Խոնիատիսը, որը պատմական կերպար է, ի վերջո ինքն է ընտրում ինչ և ինչպես ներկայացնել իր աշխատության մեջ, որը գոյություն ունի առ այսօր, կամ էլ անում է դա որևէ մեկի պարտադրանքով:

Հետաքրքիր է, որ այս գաղափարը առկա է նաև իտալացի գրող Ի. Կալվինոյի «Անիրական ասպետը» վեպում. «Ես, որ գրում եմ այս պատմությունը, Սան Կոլոմբանո միաբանության քույր Թեոդորան եմ: Գրում եմ մենաստանում՝ օգտվելով հին թղթերից, ընդունարանում լսած գրույցներից և հազվագյուտ ականատեսների վկայություններից: Մենք՝ միանձնուհիներս, զինվորների հետ գրուցելու շատ հնարավորություններ չունենք և, հետևաբար, այն, ինչ չգիտեմ, աշխատում եմ երևակայել, իսկ ուրիշ ի՞նչ կարող եմ անել⁸»: Այս չափազանց խոստում մեջբերման մեջ ակնհայտ է հեղինակի հեզնանքը՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ պատերազմական տեսարաններով լի ասպետական այս վեպի շարադրողը կին է, այն էլ՝ միանձնուհի: Ակնհայտ է նաև այն, որ քույր Թեոդորան, Բաուդոլինոյի պես, հաճախ է դիմում իր երևակայության օգնությանը և պատմում նաև այն, ինչ չի տեսել, մի հատկություն, որն Օտոն Ֆրեյզինգացին այդքան գնահատում էր Բաուդոլինոյի մեջ: Սա ստիպում է ընթերցողին կասկածել «պաշտոնական» պատմության հավաստիությանը ու վերանայել սեփական վերաբերմունքն այս հարցի նկատմամբ: Պատմության «ստեղծման» օրինակների միջոցով հեղինակը կարծես հրավիրում է ընթերցողին ուշադրություն դարձնել ժամանակակից պատմության կերտման գործընթացին, քանի որ պատմության օբյեկտիվության ու հավաստիության խնդիրը արդիական է նաև մեր օրերում:

Պատմության «ոչ պաշտոնական» տարբերակի համար, ինչպես արդեն նշեցինք, Էկոն օգտագործում է նաև ժողովրդական, առասպելական, անեկդոտային և այլ «ոչ պաշտոնական» աղբյուրներ: Քննարկելով «Բաուդոլինո» վեպում Էկոյի ստեղծած պատմական և երևակայական, իրական ու մտացածին աշխարհները՝ կարող ենք եզրակացնել, որ այս գործում արտացոլված՝ միջնադարի հեղինակային հայեցակարգում այդ աշխարհներն այնքան սերտորեն են միահյուսված, որ դժվար է իրարից զատել:

Այսպես, ըստ հեղինակի հեզնական ներկայացման՝ պատմությունը կազմված է քիչ թե շատ հավանական պատումներից, որոնք ստեղծված են Բաուդոլինոյի պես հնարամիտ մարդկանց հարուստ երևակայությամբ. սրանով իսկ նա կասկածի տակ է

⁷ Eco U., նշվ. աշխ., էջ 526:

⁸ Calvino I. Il Cavaliere inesistente Mondadori, Milano, 2002, p. 32.

առնում մինչև այժմ գրված պատմության ճշմարտացիությունն ու ստիպում մտածել ներկայիս պատմության «ստեղծման» մասին:

**РЕАЛЬНОЕ И ВЫМЫШЛЕННОЕ
В РОМАНЕ “БАУДОЛИНО” УМБЕРТО ЭКО**

ЕГИАЗАРЯН А. А.

Резюме

Итальянский писатель и философ Умберто Эко являлся видным представителем постмодернизма. В романе “Баудолино” писатель обращается к проблеме субъективизма в истории, сочетания реального и вымышленного. Обращаясь к жанру исторического романа, У. Эко предлагает свою версию “создания” истории средневековья, тем самым ставя под сомнение ее объективность, что наводит на размышления о том, как “творят” историю в наши дни.